**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03**
**ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ**

ք. Երևան 24.06.2019թ.
ժամը՝ 11:00

**Հանձնաժողովի նախագահ՝**
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող՝ Գ. Ներսիսյան

**Անդամներ՝**
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի օգնական՝ Ա. Թադևոսյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի պետ՝ Մ. Սանթրոսյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ Է. Միքայելյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ՝ Ա. Թորոսյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

**1. ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման եզրակացությունը, համաձայն որի՝

1.1.1 «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**2. ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին**

**<u>Հանձնաժողովը որոշեց.</u>**

2.1. Ընտրված մասնակիցներ ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակիցների հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայամանագրեր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝**

| | | | |
|---|---|---|---|
| **Նախագահ՝** | Գ. Ներսիսյան | ԳՊ/ԳԱՊ | |
| **Անդամներ՝** | Ա. Թադևոսյան | ԳՊ/ԲԱ | |
| | Մ. Սանթրոսյան | ԳՊ/ԲԱ | |
| | Է. Միքայելյան | ԳՊ/ԳԱ | |
| | Ա. Թորոսյան | ԳՊ/ԳԱ | |
| **Քարտուղար՝** | Լ. Ադոնց | ԳՊ/ՄՀՄ | |